

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված  
 ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման  
 աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պոռոշյան բնակավայրի գլխավոր հատակագծում  
 առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության  
 վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման  
 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.



1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի  
 համայնքի Պոռոշյան բնակավայրի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-053-0385-0008 կադաստրային ծածկագրով 0.882 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	07-053-0385-0008 կադաստրային ծածկագրով 0.882 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր և տեքստային մասի համապատասխան փոփոխություն կատարել (սահմանելով բազմահարկ գոտի՝ 2-3 հարկ)

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից նշված պահանջը՝ կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն իրականացվեն բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին,

4. Նաիրի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Պոռոշյան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,  
 - ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պոռոշյան բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	 Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	 Տ. Դավթյան